24.09.2025թ. /հրապարակման ամսաթիվը/

Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Ֆիզիկա» (8 դասաժամ), «Հայոց լեզու և գրականություն» (5 դասաժամ), «Գերմաներեն» (14 դասաժամ), «Պատմություն» (8 դասաժամ), «Մաթեմատիկա» (5 դասաժամ), առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար (դպրոցում առկա է նաև ինֆորմատիկայի 23 դասաժամի ժամանակավորապես թափուր տեղ)

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1)
- 1 լուսանկար 3x4 չափի
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)
- անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ.-ի սեպտեմբերի 24-ից մինչև 2025 թ.-ի հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր ՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 10-ին՝ ժամը 12:00-ին Արմավիրի մարզի «Արմավիրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հասցե՝ Արմավիրի մարզ, Արմավիրի միջնակարգ դպրոց, փողոց 1, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 02 16 77 հեռախոսահամարով:

Scanned with CamScanner